«ՀՀ կառավարության 2002 թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1556-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «ՀՀ կառավարության 2010 թ. սեպտեմբերի 9-ի N 1182-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

---------- 2023 թվականի N - Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 1182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.
1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Հափշտակված, կորած և (կամ) հայտնաբերված զենքի ու ռազմամթերքի հաշվառման, հաշվառումից հանելու կարգը սահմանելու մասին» N 1182-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները ՝
1) Որոշման նախաբանում «և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1566-Ն որոշմամբ հաստատված ցանկի 3-րդ կետերի» բառերը փոխարինել «կետի և Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի» բառերով։
2) Որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետև՝ Ոստիկանություն)» բառերով։
3) Որոշման ողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» և «ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Ոստիկանություն» բառով և դրա հոլովաձևերով։
4) Որոշման ամբողջ տեքստում «կորած» բառից հետո լրացնել «վերահսկողությունից դուրս մնացած» բառերը՝ բացառությամբ Որոշման 3-րդ կետի.
5) Որոշման N 1 հավելվածի 2-րդ կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«6) Ոստիկանության վերահսկողությունից դուրս մնացած զենք (այսուհետ՝

վերահսկողությունից դուրս մնացած)՝ ոստիկանությունում հաշվառված զենք, որի առկայությունը և գտնվելու վայրը հնարավոր չի եղել պարզել».
6) Որոշման N 1 հավելվածի 3-րդ կետը լրացնել 4-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«4) ոստիկանության վերահսկողությունից դուրս մնացած լինելը».
7) որոշման N 1 հավելվածը լրացնել 6.1-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.
«6.1) Սույն կարգի 3-րդ կետի 4-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարույթ իրականացնող մարմինը արձանագրություն կազմելուց կամ պատշաճ գրավոր նախազգուշացումից 15 օր հետո լրացնում է N 1 ձևի քարտը՝ դասակարգչի համաձայն, և այն ուղարկում է ինֆորմացիոն կենտրոն՝ զենքը որպես վերահսկողությունից դուրս մնացած հաշվառման վերցնելու համար».
8) որոշման N 2 հավելվածով հաստատված ՁԵ N 1-ի և ՁԵ N 2-ի 16-րդ և 26-րդ կետերում «կորցնելու» բառերից հետո լրացնել «վերահսկողությունից դուրս մնալու» բառերը.
9) որոշման N 2 հավելվածի ՁԵ N 2-ի 14-րդ կետում լրացնել 10-րդ ենթակետով՝ «10 վերահսկողությունից դուրս մնացած» բովանդակությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն.Փաշինյան
« » 2023թ.
ք.Երևան

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

---------- 2023 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 1556-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի «Քաղաքացիներին և կազմակերպություններին պատկանող՝ ոստիկանության կողմից հատուկ հաշվառման ենթակա առարկաների, սարքավորումների և փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N 1556-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝
- Որոշման նախաբանում «6-րդ կետին» բառերը փոխարինել «3-րդ կետին» բառերով.
- Որոշման հավելվածով հաստատված ցանկի 3-րդ կետում «կորած» **բառից հետո լրացնել «,վերահսկողությունից դուրս մնացած» բառերը:**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ **Ն.Փաշինյան**

«_____»

_____2023թ.

ք.Երևան